

Հարգելի գործընկերներ,

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ (ՀՌԿԿ) -Հայաստանը և ԱՄՆ ՄՁԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիրը հրավիրում են մասնակցելու

**Կոռուպցիան Հայաստանում. հասարակության և գործարարների կարծիքը**  
հետազոտության արդյունքների և մեթոդաբանության ներկայացմանը և քննարկմանը:

**Ե՞րբ** Մայիսի -12-ին, 2010թ., ժ. 15:30 -17:00  
**Որտե՞ղ** ՀՌԿԿ-Հայաստան, Աբովյան 52, ԵՊՀ VI մասնաշենք, 305 սենյակ  
**Լեզուն** Հայերեն

**Ընդհանուր ակնարկ.** ՀՌԿԿ-Հայաստանի անձնակազմը և փորձագետները ներկայացնելու են ԱՄՆ ՄՁԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի շրջանակներում իրականացված կոռուպցիայի վերաբերյալ հետազոտության արդյունքները և մեթոդաբանական մանրամասները: Սույն հետազոտությունն իրականացվել է 2009թ. հոկտեմբերից 2010թ. հունվար ընկած ժամանակահատվածում Հայաստանի ողջ տարածքով 1515 տնային տնտեսություններում և 400 մասնավոր ձեռնարկություններում:

Տնային տնտեսություններում հավաքագրված տվյալները վերաբերում են կոռուպցիայի ընդհանուր ընկալմանը, դրա դրսևորման ձևերին ու տարբեր ոլորտներում տարածվածությանը, կոռուպցիոն անհատական վարքագծին, կառավարության և ՀԿ-ների հակակոռուպցիոն գործողությունների մասին տեղեկացվածությանը և այլն: Այս արդյունքները համեմատության մեջ են դրվում 2008թ.-ին իրականացրած նույնանման հետազոտության արդյունքների հետ:

Գործարարների շրջանում հավաքագրված տվյալները վերաբերում են կոռուպցիայի տարբեր դրսևորումներին և ընդհանուր տնտեսական և գործարար միջավայրին, բյուրոկրատիայի լրացուցիչ գործառնական ծախսերին, դատական համակարգի նկատմամբ ունեցած վստահությանը և արդյունավետության գնահատականներին: Հնարավորության դեպքում այս արդյունքները համադրվում են տնային տնտեսությունների հետազոտության համապատասխան արդյունքների հետ:

**Քննարկումը նախատեսված է** հետազոտողների, գիտ.աշխատողների և այլ շահառուների համար:

**Բանախոսների մասին.** Հանդիպումը վարելուն են ՀՌԿԿ- Հայաստանի տնօրեն Հ. Մանասյանը, ծրագրերի ղեկավար Ե. Պատուրյանը, դաշտային աշխատանքների ղեկավար Ռ. Յեգանյանը, ընտրանքի մասնագետ Գ.Ղուկասյանը:

**Գրանցվելու կարգը.** Հետազոտության արդյունքներին ծանոթանալու ու դրանց քննարկմանը մասնակցելու Ձեր մտադրության մասին տեղեկացրեք խնդրեմ [crrcnews@crrc.am](mailto:crrcnews@crrc.am) էլ. հասցեով կամ 58-14-50, 58-13-30 հեռախոսահամարներով՝ մինչև ս.թ. մայիսի 11-ը, ժ.17.00-ը՝ նշելով Ձեր աշխատավայրը և պաշտոնը: